ՊՏՐԵՑԻՔ ԳԵՏԱՀՈՎՏԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պտրեցիք գետը, որը Արցախի լեռնային Կարկար գետի ձախ ամենաջրառատ ու երկար վտակն է, սկիզբ է առնում Ղարաբաղի (Արցախի) լեռնաշղթայի արևելյան լանջերից։ Այն իր վերին հոսանքում ունի խիստ կտրտված տեղանք և երկու կողմերից ընդունում է բազմաթիվ այլ վտակներ ու առվակներ, որոնց մեծ մասը սնվում է քաղցրահամ աղբյուրներից։ Գետը հոսում է համանուն գյուղի ստորոտով և, մտնելով հարթավայր, Խոճալի գյուղի մոտ (այժմ՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ասկերանի շրջանում) թափվում Կարկար գետը։ Միջնադարում Պտրեցիք գետի ավազանը խիտ բնակեցված է եղել։ Այդ են վկայում բազմաթիվ գյուղերի ավերակներն ու եկեղեցիները, վանքերն ու գերեզմանոցները, որոնք այժմ, գրեթե առանց բացառության, ծածկվել են խիտ անտառներով ու թփերով։ Այդ բնակատեղերի որոշակի տեղաբաշխվածությունից պարզվում է, որ գետի միջին և մանավանդ վերին հոսանքի հատվածները, որտեղ տեղանքը պաշտպանության տեսակետից առավել հուսալի էր, ավելի խիտ է բնակեցված եղել։ Պատմական Պտրեցիք (այժմ՝ Բագարա, ԼՂԻՄ, Ասկերանի շրջան) գյուղից գետի հոսանքով վեր, թավուտ անտառներում պահպանվել են մեկ տասնյակից ավելի գյուղատեղեր և մի քանի հարտարապետական ուշագրավ կոթող-համալիրներ։ Մասնագիտական գրականության մեջ այս գետահովտի հուշարձանները լուրջ ուսումնասիրության չեն ենթարկվել և մանավանդ դեռևս չեն արտագրվել ու հրապարակվել այն բազմաթիվ միջնադարյան արձանագրությունները, որոնք բարեբախտաբար պահպանվել են այդ հնավայրերում։ Գետահովտի պատմաճարտարապետական հուշարձանների գոյության և դրանց տեղադրավայրերի վերաբերյալ համառոտ տեղեկություններ տվել են տարբեր գիտնական-մասնագետներ։ Ձորահովտի հնավայրերից մեր հավաքած XII—XIV դդ. 25 արձանագրություններից մինչև այժմ հրապարակված են երկուսը. մեկը Մակար եպիս. Բարխուտարյանցի[1] կողմից, իսկ մյուսը՝ Շ. Մկրտչյանի[2]։ Վերջին արձանագրությունը ներկայացնում ենք ուղղումներով և լրացումներով։

Առաջին խոշոր հնավայրը, որ հայտնի է Օխտը եղցի (յոթ եկեղեցի) անվամբ, գտնվում է Պտրեցիք գյուղից մոտ 8 կմ հյուսիս-արևմուտք, համանուն գետի աջ կողմում, գետափից մոտ 1,5 կմ հեռու, բարձր, անտառածածկ բլրի թեք լանջին։ Տեղանքն ունի հրվանդանի ձև։ Այստեղ նկատվում են կանգուն, կիսավեր կամ հիմնահատակ քանդված 12 տարբեր շենքերի մնացորդներ։ Ելնելով հնավայրի Օխտը եղցի անվանումից, թյուրիմացաբար, տարբեր կարգի շենքեր վերագրվել են եկեղեցուն և այդպիսով տեղում «տեսել» յոթ եկեղեցի։ Սակայն իրականում համալիրը բաղկացած է երեք եկեղեցուց, որոնցից մեկը կանգնած է առանձին, մյուս երկուսը կից են իրար։ Վերջիններիցս արևելյանը հյուսիսից ունի ավանդատուն, իսկ հարավ-արևելքից նրան կից է մի փոքրիկ մատուռ։ Գլխավոր կամ մեծ եկեղեցուն հյուսիսից կից է դամբարանատան կամ տապանատան թաղածածկ շենքը։ Համալիրի հարավ-արևելյան ծայրում ուղղանկյուն հատակագծով մի շենք կա, որը, հավանաբար, ծառայել է որպես դավիթ և արևմուտքից ունի մուտք։ Նման մի այլ շենք, որի մուտքը բացվում

---

[1] *Մակար եպիս. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 156—159։*

[2] *Շահեն Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 133—135։*

է արևելքից, կիսավեր վիճակում պահպանվում է մեծ եկեղեցու հարավ-արևմտյան անկյան մոտ։ Հիմնահատակ ավերված երկու այլ շենքերի մնացորդներ են պահպանվել համալիրից 6—7 մ հեռու։ Վերջիններիցս արևմուտք տարածվում է խաչքարերով հարուստ գերեզմանոցը, ուր ևս նկատվում են երկու տարբեր շենքերի հետքեր (հավանաբար մատուռների)։ Այսպիսով, հուշարձանախմբի Օխտը եղցի անվանումը զուտ ժողովրդական է և ոչ թե պատմական։ Տեղում պահպանված 12 արձանագրություններից և ոչ մեկում, ցավոք, չգրտնվեց այս հուշարձանախմբի իսկական՝ հնագույն անվանումը։ Հուշարձանախմբում շենքերի դասավորությունն ունի հետաքրքիր լուծում։ Այսպես, երկու իրար կից հնագույն եկեղեցիների մուտքերը և դրանցից արևելք ընկած երկու



Նկ. 1. Պտրեցիք գետահովտի սխեմատիկ քարտեզը։

ուղղանկյուն հատակագծով շենքերի մուտքերը բացվում են մի փոքրիկ հրապարականման տեղում, որն, հավանաբար, բակի նշանակություն է ունեցել։ Այս միջանցիկ մակերեսն արևելքից զարդարում են երեսով դեպի արևմուտք, իրար կողք-կողքի կանգնած խաչքարերը, որոնցից մեկն ունի 1185 թ. արձանագրություն։ Եկեղեցիների հորինվածքային կարևոր առանձնահատկությունն ուղղանկյուն բեմն է։ Ավագ խորանի այդ կերպ լուծումը բավականաչափ տարածված և ընդունված է Արցախի հայ պաշտամունքային ճարտարապետության մեջ։ Դրանք հանդիպում են երկրամասի կենտրոնական գավառներում՝ սկսած վաղ միջնադարից մինչև XIX դ.։ Եկեղեցիները կառուցված են անտաշ և կոպտատաշ տեղական քարերով ու կրաշաղախով։ Շենքերից և ոչ մեկը ամբողջությամբ չի պահպանվել։ Եկեղեցիների ներսում կան ծեփի հետքեր։ Համալիրի մեծ և կից եկեղեցու հարավային ճակատներում, արտաքինից պատի մեջ տեղադրված, նկատվում են մինչև X դ. բնորոշ զարդաքանդակներով հնաոճ խաչքարերի կտորներ։ Դամբարանատան շենքը, որը միակ ամբողջական կանգուն կառույցն է համալիրում, կառուցվել է մեծ եկեղեցուց հետո՝ վերջինիս կցվելով հյուսիսից։ Շենքի ներսում, արևելյան պատի տակ, իրար կողք կանգնած են եղել չորս խաչքարեր, որոնցից մեկն է տեղում մնացել, իսկ մեկի էլ՝ միայն պատվանդանի սրբատաշ քարը։ Այդ խաչքարն, ի դեպ, ունի թվակիր ամենա-

Հին արձանագրությունը խաչքարը կերտված է ապիտակ կրաքարից և ներկված է եղել կարմիր ներկով։ Խաչի ստորին մասում, պատկերաքանդակների շուրջը, 10 տողանոց արձանագրություն է 1158 թվագրությամբ (աղ. 1, ա).

Նկ. 2. Սմպատ իշխանի կանգնեցրած խաչքարը։

ԹԻՒ

ՈԷ (1158) :ԷՐ: ԵՍ Ս
ՄՊԱՏ ՈՐԴԻ
ՎԱՍԱԿԱ ԿԱՆ
ԳՆԵՑԻ ՁԽ
ԱՋՍ ՈՐԴ

ՈՅ ԻՄՈՅ ԶԴԱՒ
ԹՈՆԻՍ ՈՐ ԿԱՌՍ
ԱՒՐԵԱ ՓՈՒ
ԵՑԱՒ Ի ՔՍ

Խաչքարի ստորին կենտրոնական մասում կա երկու տող.

ՍՄՊ ատն թիկնանոցիդ Ի Առդյաց մկնատաղ
ԱՏ ՈՐԴԻ ՅԻՇԵՑԷՔ

Դամբարանատանը ուրիշ արձանագիր կոթող ներկայումս չկա։ 1163 թ. մի խաչքար, որը ջարդվել ու բաժանվել է երեք մասի, գտնվում է առանձին կանգնած եկեղեցուց երկու մետր հարավ։ Եկեղեցուց մնացել է պահպանվել է արձանագրության պատառիկ և հեծյալի քանդակ։ Մաս՝ (աղ. 1, բ).

ԹԻՒՆ ՈԺԲ (1163) ԷՐ,
. ՄՊԱՏԱՆ ՄԱՐԴՈ .. . . . մ . . . . . .

Մեկ ուրիշ խաչքարի վրա, որ ընկած է առանձին կանգնած եկեղեցու մուտքի մոտ կա 1165 թ. արձանագրություն (աղ. 1, գ).

Ի ՈԺԴ (1165)
ԹՎԱ
ԿԱ
ԽԱՋՍ Ի ՏԱՊԱՆԻ ՀԱՍԱՆԱ ՈՐ (ԴԻ)
ԱԿ . . . . . ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԱՂԱԻԹՍ Յ (ԻՇԵՑԷՔ)

Գավթի արևմտյան ճակատում դրսից ագուցված են խաչքարեր, որոնցից մեկի վրա փորագրված է.

ԹԻ (Ի) Ն Ո
ԼԴ (1185)
ԷՐ։
ԵՍ (Ս) ԱՐԳԻՍ
Ս ԿԱՆԳՆ
ԵՑԻ ՁԽԱՁ
Ս Ի ՓՐԿՈՒԹ

Խաչի ստորին հատվածի արձանագրությունը չի ընթերցվում առջևում մեկ ուրիշ խաչքար տեղադրված լինելու պատճառով։ Սրա վրա հազիվ նկատեցինք ԱՂԱԻԹՍ բառը։ Այդ խաչքարը ևս վերաբերում է XII դ. երկրորդ կեսին՝ 1185 թ.։

Դամբարանատան մուտքի դիմացի շարդված խաչքարի ստորին մասում հեծյալի քանդակ է, շուրջը 1193 թ. արձանագրություն (աղ. 1, դ).

ԹԻՒ ՈԽԲ (1193)։ ԵՍ ԽՈՐ
ԻՇԱՀ ԿԱՆ՛(ԳՆ) ԵՑ
Ի ՁԽ
ԱՁՍ Ի
(ՏԱ) ՊԱՆՈ
ՎԱՐՀԱՄԱ

Առանձին կանգնած եկեղեցուց մոտ 8 մ արևելք 1203 թ. արձանագրությամբ խաչքար կա, որի ստորին մասում հեծյալի քանդակ է, շուրջը՝ 8 տող (աղ. 1, ե).

Թ (ԻՒ) ՈՄԲ ԷՐ (1203 թ.)
ԵՍ ՎԱՐՀ
ԱՄ ԿԱՆԳ
ՆԵՑԻ Ձ
ԽԱՁՍ
ՀԱԻԵՏ
ԻՔԱՑ
ՑԱՂԱ
ԻԹՍ ՑԻՇԵՑԷՔ

1216 թ. արձանագրությամբ երկու խաչքարերից մեկը գտնվում է բակի հարավային ծայրում և կոտրված է, իսկ երկրորդը՝ համալիրից մոտ 80 մ, արևմուտք՝ մի բարձունքի վրա, որի մոտ նկատվում են ինչ-որ շինության (հավանաբար մատուռի) հիմնապատեր։ Առաջին խաչքարի արձանագրությունը հետևյալն է (աղ. 1, զ).

Թ:Վ:ԱԿ:ԱՆ:Ո:Կ:Ե: (1216)։
ԷՐ ԵՍ ՀԱՑՐԱՑՊԵՏ
ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՁ
Ս ԻՄ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՄԲՍ ԲԱՐԵԽԱՒՍԻՆ
ԱՌՀԱ . . . . Ն . . . ՈՐԴԻՆ ՄԻԱՏԻՆ

Հուշարձանախմբից արևմուտք, գերեզմանոցում գտնվող խաչքարի վրա կարդում ենք.

Ի ՈԿԵ (1216) Թ
ԻԱԿԱՆԻՍ ԵՍ ՎԱՍԱ
Կ ՈՒ ՀԱՍԱՆ ԿԱՆԳՆԵՑԱՔ ՁԽԱՁՍ
Ի ՏԱՊԱՆԻ ՀԱՒՐ ՄԵՐՈՑ ՄՈՁԻ ՈՐ. . . .



Աղյուսակ 1

1225 թ. խաչքար կա գլխավոր եկեղեցուն հարավ-արևմուտքից կցված ուղղանկյուն հատակագծով շենքի արևելյան պատի մեջ, ներսից։ Վրան՝

ԹԻՒ:
Ո:Հ:Դ:
ԷՐ:

Խաչի ստորին մասում փորագրված է հեծյալի քանդակ և արձանագրություն, որը հողի մեջ մնացած լինելու հետևանքով քայքայվել ու անընթեռնելի է դարձել։ Նույն շենքի ներսում 1237 թ. խաչքարի ստորին մասում պահպանվել է հետևյալ հինգ տողը (աղ. 1, է).

Թ ՈՁՁ (1237).
ԵՍ ՄԱՍԷՍ Կ
ԱՆԳՆԵՑԻ ՁԽ
ԱՁՍ ԻՄ ԿԵՆԴ
ԱՆՈՒԹԲ Ի ՓՐԿՈՒԹԻ Հ. . . . .

Առանձին կանգնած եկեղեցուց հարավ-արևելք, մոտ 6 մ հեռու գտնվող խաչքարի վրա փորագրված է (աղ. 1, ը).

ԹՒԻ
ՈՂ
Ա (1242) թ.

Երկրորդ եկեղեցուն հյուսիսից կցված ավանդատան ներսում, երեսի վրա ընկած խաչքարի վրա պահպանվել է երկու տող.

. . . .Յի ՔԽԱՉՍ ԵՂԲԱՒՐ . . . ՎԱ . . . .
ԱՀԱ ԱՅՍ Է . . . .

Խաչքարը չկարողացանք շրջել՝ ճշտորեն իմանալու համար ճակատային մասում արձանագրություն կա՞ թե ոչ։

Ահա սրանք են Օխտը եղցի հուշարձանախմբի տարածքից մեր հավաքած արձանագրությունները։ Սրանով, իհարկե, հակված չենք կարծելու, թե հնավայրում այլ արձանագրություններ չկան։ Ընդհակառակը, դրանց մի զգալի մասը խրված է հողի մեջ և կամ թաքնված հարյուրամյա մամուռի շերտի տակ։ Տարբեր կառույցների փլատակների մեջ ևս կգտնվեն այդպիսիները, որոնց շնորհիվ գուցե հնարավոր կլինի պարզել վանքի և ամբողջ գավառի պատմության շատ հարցեր։

Ինչպես նշվեց, վերոհիշյալ խաչքարերից մի քանիսի վրա քանդակված էր զենքով ու զրահով հեծյալ։ Սա եզակի դեպք չէ. Արցախի այլ հինավուրց վանքերի շրջակայքում ևս հանդիպում են նման պատկերաքանդակներով խաչքարեր։ Այսպես, օրինակ՝ Օխտը եղցուց 30 կմ հյուսիս գտնվող Կոշիկ անապատում և դրանից 5—6 կմ հեռու Հավոց Պտուկ վանքում նույնպես կան նմանօրինակ խաչքարեր։ Իշխանների ու զորավարների հիշատակին կանգնեցված այդօրինակ խաչքարերից է Գեղմահովիտից (ՀՍՍՀ Արտաշատի շրջանում) էջմիածին տեղափոխված Գրիգոր Խաղբակյան (Պռոշյան) իշխանի 1233 թ. խաչքարը, որի ստորին մասում, խաչի տակ, պատկերված է մեծ իշխանը ձիու վրա՝ զինված ու զրահապատված։

Օխտը եղցուց 4—5 կմ հարավ-արևելք, Պտրեցիք գետի ձախ կողմում, բարձր լեռնալանջին են գտնվում միջնադարյան մի բնակատեղի, ընդարձակ գերեզմանոց ու եկեղեցի։ Հնավայրը ավանդաբար կոչում են ԾԵՐԱ ՆԱՀԱՏԱԿ։ Եկեղեցին կառուցված է մի հովանդանանման տեղում, որտեղից բացվում է ընդարձակ տեսարան։ Հուշարձանն ունի միանավ բազիլիկի հորինվածք, միակ մուտքն իրականացված է հարավային ճակատից։ Արևելյան և արևմտյան կողմերից ունի դեպի ներս լայնացող վեկական լուսամուտ։ Ինչպես Օխտը եղցու հուշարձանները, Ծերա Նահատակը նույնպես կառուցված է անտաշ ու կոպտատաշ քարերով և կրաշաղախով՝ բացառությամբ այն միակ սրբատաշ քարի, որն ագուցված է կառույցի արևմտյան ճակատում, և որի վրա պահպանվել է շինարարական արձանագրությունը։ Եկեղեցու ավագ խորանը նույնպես, ինչպես Օխտը եղցու բոլոր եկեղեցիներում, լուծված է ուղղանկյան ձևով, որի երկու կողմերից բացվում են փոքրիկ խորշեր։ Եկեղեցին[3], ըստ Մուտքի ճակատակալ կոպտատաշ քարի վրա փորագրված հակիրճ արձանագրության (ԹՒԻՆ ՉԾԵ), կառուցվել է 1326 թ.։ Արձանագիր քարի չափերն են 137×26 (աղ. 2, ա), իսկ շինարարական յոթտողանոց արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը (աղ. 2, բ).

Ի ԿԱՄՍ ԱՅ
Ի ՑԻՇԽԱՆՈՒԹ
ԵԱՆՆ ՍԸՆՊԱՏԱՅ
ԵՍ ՄԽԻԹԱՐ ԵՐԷՑ
ՇԻՆԵՑԻ ՋԵԿԵՂԵՑԻ
Ս ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ
ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԷՔ

---

[3] Չափագրությունները կատարել են Վալտեր Զարյանը և Սամվել Կարապետյանը։



Նկ. 3. Օխտը եղցի վանքի հատակագիծը։

Արձանագիր քարի չափերն են 57×57։ Արձանագրությունից պարզվում է, որ եկեղեցին կառուցվել է Սնպատ իշխանի օրոք՝ Մխիթար երեցի պատվերով։ Սնպատ իշխանի վերաբերյալ պատմագրական որևէ տեղեկություն չունենք, բացի այն, որ հայտնի է իշխանի գահակալության տարիներից մեկը՝ 1326 թ.։ Առավել ևս մեզ հայտնի չէ Մխիթար երեցի ով լինելը, որ հիշատակված է արձանագրության չորրորդ տողում։ Եկեղեցուն հարավից կից է եղել մի փոքրիկ մատուռ, որը, ցավոք, վերջին տարիներին հիմնահատակ ավերվել է։ Եկեղեցուց ոչ հեռու, կիսով չափ հողի մեջ խրված, կա 1246 թ. ութտողանոց արձանագրությամբ մի այլ խաչքար։ Սրա վրա քանդակված են զույգ միանման խաչեր։ Քարի վերին մասն ավարտվում է կիսաշրջանի ձևով, իսկ ստորին մասում ունի ութտողանոց ընդարձակ արձանագրություն։ Զույգ խաչերի միջև, խաչքարի կենտրոնական մասում, եռատող թվականն է.

ԹԻՒ
ՈՂԵ (1246)
ԷՐ
ԵՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՎ ԵՂԲԱՐՔՍ ԻՄ Կ
ԱՆԳՆԵՑԱՔ ՁԽԱՉՍ ՀԱՒՐ ՄԵՐՈՅ Բ
ԱՐՍԵՂԱՑ ԵՒ ԵՂԲԱՒՐ ՄԵՐ Դ (ԱՆ)
ԻԵԼ . . . . . ՊԵՏԻ ՈՐ ՏԱՐ (Ա)
ԺԱՄ ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ՔՍ . . . . . .
. . . ԳԱ . . . .ՄԽԻԹԱՐ . . . . .ՈՐ
ԵՄ. . . . ԵՐԿՐՊԱԳԷՔ ԱՂ
ԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ

Պարզվում է, որ եկեղեցու տեղում եղել է գերեզմանոց, որի անխոս ապացույցն են շուրջ 150-ի հասնող անարձանագիր խաչքարերը՝ IX—XIII դդ. բնորոշ զարդանախշերով ու ոճով։ Մեկ այլ արձանագիր խաչքար ընկած է եկեղեցուց հարավ-արևելք (աղ. 2, գ).



Աղյուսակ 2

ՅԵՍ ՅՈՎԱՆՆԱՅՍ ՇԻՆԵՑԻ
Ն(ԿԵ)ՂԵՑԻՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑ(Ի) ԶԽԱՉ
Ս Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅ ԻՄՈ ՈՅՔ
(Ը)ՆԹԵՌՆՈՅՔ ԶԻՍ ՅԱՂԱՒԹՍ
ՅԻՇԵՑԷՔ

Անթվակիր այս արձանագրությունից իմանում ենք, որ Հովհաննան կառուցել է մի եկեղեցի և իր հոգու փրկության համար, նաև՝ ի նշանավորումն այդ եկեղեցու կառուցման, կանգնեցրել խաչքարը։ Հավանաբար, այդ այն մատուռն է, որ հարավից կից է Մխիթար երեցի կառուցած եկեղեցուն։ Ընդարձակ գերեզմանատան խաչքարերից միայն մեկի վրա գտանք արձանագրություն.

ԵՍ Գ
Ը(Ի)ԳՈՐ
(ԿԱՆԳՆԵ)ՑԻ . . . . .
. . . . . ԱԻՐ ԻՄՈՅ . . . . .
. . . . . .Ա ՅԻՇԵՑԷՔ

Մի մեծ խաչքար, որի վրա, ըստ տեղացիների վկայության[4], կա արձանա-

[4] Հոդվածում նշված տեղադրավայրերին ծանոթացնելու և մեզ օգնելու համար շնորհակալություն ենք հայտնում Բաղարա գյուղի բնակիչ Արմեն Խաչատրյանին և դպրոցի դիրեկտոր Սրմեն Հովհաննիսյանին։

գրություն, երևանիվայր ընկած էր եկեղեցուն խիստ մոտ, արևմտյան կողմում։ Վերջինս չկարողացանք շրջել, որպեսզի վիմագիրը կարդանք։

Ներա Նահատակ հուշարձանախմբից 6—7 կմ հյուսիս-արևելք, բարձր լեռների վրա Օձկա վանքն է՝ ծածկված խիտ ծառերով ու շրջապատված քարաժայռերով։ Վանքը բաղկացած է եկեղեցուց, գերեզմանոցից և մի քանի ավերակ շինություններից։ Ինչպես Օխտը եղցիում, այստեղ ևս խաչքարերով հարուստ միջնադարյան գերեզմանոցը տարածվում է եկեղեցուց արևմուտք։ Եկեղեցին ունի միանավ թաղածածկ բազիլիկի հորինվածք, որի հյուսիսային կողմից, արևելք- արևմուտք ուղղությամբ, ի սկզբանե կցված են եղել երկու ավանդատներ։ Եկեղեցին կառուցված է անտաշ քարից։ Նրա ավագ խորանի հյուսիսային կողմի որմի ստորին շարվածքում պահպանվել են հնագույն եկեղեցու քանդակազարդ բեկորները։ Արևմտյան ճակատում՝ զրսից ագուցված են եղել մի քանի սպիտակ, սրբատաշ արձանագիր քարեր։ Ցավոք, դրանք վերջին տարիներին ջարդոտվել ու տեղահան են արվել։ Պահպանված երեք քարերից երկուսի վրա, որոնք դեռ տեղում են, հազիվ մի քանի տառ է նշմարվում։ Դրանցից մեկը, որ ընկած է եկեղեցու ներսում, ընդարձակ արձանագրության միջնաքարերից է։ Վերջինիս վրա ընթերցվում է հետևյալը (աղ. 2, դ).

. . . (ԱՌԱՋՆ) ՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՍ Հ. . .
. . . . ՐԿԻՆ ՁԺԱՄՆ:Ժ: (10) ԱԲ. . . .
. . . . ԱԲ ԱՐՁՈՒ ԽԱԹՈՒՆ. . . .
:ԱՒ ՈՐՔ ՀԱՍՏ. . . .

Արձանագրության երրորդ տողում հիշատակված Արղու Խաթունը Քուրդ Արծրունու դուստրն է, Վերին Խաչենի տեր Վախթանգի կինը, որը Դադի վանքում, իր զոհված ամուսնու և որդիների հիշատակին, 1214 թ. շինել է տվել կենտրոնագմբեթ հորինվածքով հոյակապ եկեղեցի։ Համաձայն այս տվյալների, Օձկա վանքը պիտի կառուցված լինի XIII դ. առաջին քառորդում կամ էլ XII դ. վերջերին։ Հուշարձանախմբի շրջակայքում պահպանվել են բազմաթիվ կիսաավերակ ու հիմնավեր շենքերի մնացորդներ։ Եկեղեցուց արևմուտք տարածվում է պատմական գերեզմանոցը, ուր պահպանվել են մի քանի գեղաքանդակ խաչքարեր ու բեկորներ։ Դրանցից մի քանիսի վրա կիսաեղծ վիճակում պահպանվել են արձանագրությունների պատառիկներ (աղ. 2, ե).

ԵՍ (Ս)ՄՊԱՏ ՈՒ Ս
ՈՒՁԱՅ ԿԱՆԳ
ԵՅԱՔ Զ(ԽԱՉ)Ս

Ի ՏԱՊԱՆԱ. . . .
. . . .ԱՒՐ. . . .

Մեկ ուրիշ խաչքարի վրա՝ երկու տող.

ԵՍ ԱՎԵՏԻՍ ՈՐ(ԴԻ) ՀԱՍ(ԱՆԱ)
(ԿԱՆԳՆԵՅ)Ի Ի ՁԽԱՉՍ. . . . Ի ՏԱՊԱՆԻՆ. . . .

Կոտրված խաչքարի բեկորի վրա՝ մեկ տող.

ԵՒ ՔԱՋ ՊԱՏԵՐԱՁՄՈ(Ղ)

Օձկա վանքից հարավ, Բաղարա գյուղից շուրջ 3 կմ հյուսիս, կանգուն է մեկ այլ նշանավոր հուշարձան՝ Ամենափրկիչ եկեղեցին կամ, ինչպես տեղացիներն են կոչում, Փրկչի վանքը։ Այստեղ, բացի եկեղեցու ինքնատիպ ու հետաքրքիր շենքից, պահպանվում են գյուղատեղի ավերակները և ընդարձակ գերեզմանոցը՝ բազմաթիվ անարձանագիր տապանաքարերով։ Խաչքարերը խիստ քայքայված են ու հողմահարված։ Նույն վիճակում է եկեղեցու բարավորի քարը, ուր, հավանաբար, եղել է արձանագրություն։ Եկեղեցին ունի եռանավ բազիլիկի հորինվածք. արևելքում ավագ խորանն է, որին երկու կողմերից կից են ոչ մեծ ավանդատները։ Արևելյան ճակատում արտաքինից կան երկու եռանկ-

յուն խորշեր, որոնք ձգվում են ամբողջ շենքի բարձրությամբ։ Տաճարի (որն ունի երկու մուտք) հարավային և արևմտյան պատերը կառուցված են կոպտատաշ, իսկ որմնասյուներն ու շենքի անկյունաքարերը տեղական սրբատաշ պեղնասպիտակավուն շեղ քարից։ Հարավային մուտքի մոտ, երեսով դեպի արևմուտք, կանգուն է մի մեծ խաչքար։ Սրա վերին ջարդված մասում եղել է արձանագրություն, իսկ ստորին մասում զրահապատված ու ձեռքին նիզակ բռնած հեծյալի քանդակ է։ Եկեղեցու ավագ խորանի ճակատային վեց քարերի վրա, համաչափ ու մեծադիր տառաձևերով փորագրված է շինարարական արձանագրությունը, որից պահպանվել են ստորին երեք տողն ու վերին չորրորդ տողի որոշ հատվածներ։ Սա հուշարձանի տարածքում պահպանված գլխավոր արձանագրությունն է, որը առաջին անգամ հրատարակել է Մ. Բարխուտարյանցը[5], իսկ ապա վերահրատարակել Ս. Բարխուդարյանը[6].



Նկ. 4. ա) Ամենափրկիչ եկեղեցի, բ) Օծկա վանք, դ) ս. Հովհաննես մատուռ, դ) Ներա Նահատակ եկեղեցի։

ՅԱՆՈՒՆ Ա՛Յ ԵՍ Տ(Է)Ր. . . ՇԻՆԵՑԱՔ
ԶԵԿԵՂԵՑԻՍ ԶԴԱՐԱՊԱՍ ՆԿԱՐԱՔ. . . : ՈՒԽԱՆԻՆ ՄԵԾՈՒՆ
ԻՔՆ ՅԻՍ ՏՎԻՆ ԱՐԴ ԾՆՆԴԵԱՆ :Ը: ԱՒՐԷՔՆ ԵՒ ԱՂՈՒՀԱՅԻՑ ՏԱՒՆԵՐՆ
ԵՒ Ի ՁԱՏԿԷՆ ԻՆՁ ՈՒ ՆՈՐ ԿԻՐ
ԱԿԻՆ ՁՊԱՏԱՐԱԳՆ ՄԵՋ ԱՌՆԵՆ ԴԱՐԱՊԱՍ ՎԱՃԱՌՆ ՀՈՒՌԱՀՈՍ
ՏՆԵՐՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ։

Մ. Բարխուտարյանցը եկեղեցու պատի մեջ ագուցված մի խաչքարի վրա տեսել է նաև հետևյալ արձանագրությունը.

---

5 Մակար եպիս. Բարխուտարյանց. նշվ. աշխ., էջ 157։

6 Սեդրակ Բարխուդարյան, Դիվան Հայ Վիմագրության, պրակ 5, Երևան, 1982, էջ 142—143։

ԱՐԱՆՈՒՄ Է ՆԱ/ԱԱԹՈՂԻԿՈՍ Է ԱՐԲԱՅՆ

Պտրեցիք գյուղից 4—5 կմ արևելք, Խանձք գյուղի տարածքում, գտնվում է կոպտատաշ քարով կառուցված մի անանուն մատուռ, որի մուտքը հարավից է, իսկ արևմտյան պատի տակ, դրսից հենված է մի խաչքար՝ 1204 թ. կարևոր արձանագրությամբ։ Վիմագիրը խաչքարը փոտևորում է երկու կողմերից՝ 24 կարճ տողերով.

ԹԻԻ	(Հ)Ի(Ա)Ն
ՌՄԳ	ԵՑՉ
ԻՍ Դ.	ԵՒԵՂ
ԱԻԻԹ	ԵՑԻՆ
ԿԱՆԳ	ՈՐՋԱ
ՆԵՑԻ-Ս	ՔՆԱ
ԽԱՉՍ	Է ԱՊՐ
Ի ՏԱՊ	ԵՑԱԻ
ԱՆԱՑ Հ	ՇԻՆՈ
ԱՐՐ ԻՄ	ՏՍ Տ(Ա)ՐԵ
Ո ԳՐ(Ի)ԳՈ	ԿԱՑ ԱՑ
ՐՈ ՆԱ	ՈՂՈՐՄԻ

Պարզվում է, որ Դավիթը խաչքարը կանգնեցրել է իր հոր՝ Գրիգորի հիշատակին, որը կառուցել էր եկեղեցին։ Ելնելով այս խաչքարի թվագրությունից, մատուռը (արձանագրության մեջ հիշատակված է որպես եկեղեցի) կառուցվել է XII դ. վերջերից մինչև 1204 թ. ընկած ժամանակահատվածում։ Մատուռն ունի ուղղանկյուն բեմ, որից բացվում են երկու փոքրիկ խորշեր։ Շենքը ներսից սըվաղված է և ծածկված երկկենտրոն (սլաքաձև) թաղով։

1166 թ. մի արձանագիր քար էլ պահպանվել է Խանձք գյուղի ս. Ստեփանոս եկեղեցու հարավային պատի մեջ։ Արձանագրությունը բաժանված է երկու հատվածի, որոնց միջև ձախ ձեռքին կուժ բռնած կնոջ քանդակ է (աղ. 2, դ).

ԹԻԻ ԷՐ	ԵՑԻ ՁԽԱ
ՈԺԵ	ՉՍ ԽՈՐ
ԵՍ ՇՈՒՇ	ՏԻՐԱ
ԻԿ ԿԱՆԳ	ՈՐ ԵՐԿ(ՐՊԱԳԷՔ)

Մենք ներկայացրինք Պտրեցիքի ձորահովտում գտնվող առավել կարևոր հուշարձանների և դրանցում պահպանված արձանագրությունների համառոտ նկարագրությունները։ Սակայն Բաղարա գյուղի տարածքում, Պտրեցիք գետի վերին ավազանում կան մի քանի հնավայրեր, ինչպիսիք են՝ Շինատեղ, Աղասու տուն, Ուզուն տեղեր, Գետիյեր գետանցբերդ, Պորթ(բերդ) և այլն, ուր ևս հնարավոր է լինեն արձանագրություններ, որոնց ուսումնասիրությունը նույնպես կարևոր է։

---

[7] Աղվանից թեմում Աթանաս անունով երեք կաթողիկոսներ են հայտնի։ Առաջինը հիշատակված է 1279 թ., երկրորդը՝ 1434—1441 թթ. ընկած ժամանակահատվածում, որը գահակալել է 1 տարի, իսկ երրորդը՝ 1585 թ.։ Մեր կարծիքով, նշված վիմագրում խոսքը առաջինի մասին է։

[8] Արրա—արաբերեն բառ է։ Արբաին, ըստ Մ. Բարխուտարյանցի, նշանակում է չորս երկրի կաթողիկոս։

ИСТОРИКО-АРХИТЕКТУРНЫЕ ПАМЯТНИКИ РЕЧНОЙ ДОЛИНЫ ПТРЕЦИК ПО НОВОВЫЯВЛЕННЫМ НАДПИСЯМ

САМВЕЛ КАРАПЕТЯН

Резюме

Долина Птрецик, расположенная у правого притока горной реки Каркар, протекающей по центральной части исторической области Арцах Великой Армении, в период средневековья была густо заселена. В этой местности (ныне Азерб. ССР, НКАО, Аскеранский район) сохранилось множество церквей, поселений, крепостей, до нас дошли также хачкары с надписями. Здесь расположены и два монастырских комплекса. В области речной долины обнаружено около 25 ранее не опубликованных надписей, наиболее ранняя из которых датируется 1158, а поздняя—1326 годом. Обнаружились и единичные по своему архитектурному замыслу памятники, обмеры которых также публикуются впервые.